

նուորի մը կուտայ մարմնոյ ուժ և քա-
ջարտութիւն և զէնք մը . ուրեմն պար-
ծի զինուորը իր ուժին և զինուցը վրայ ,
բայց ըլլայ թէ իր անձին դէմ բանե-
ցընէ . պարծի մեր ազգն ալ իր մտաւոր
ուժին վրայ , բայց անով զինքը չվիրա-
ւորէ , հապա թող կրթէ միտքն ան-
կողմասիրութեամբ և ճշմարտութք ,
հեղութեամբ փնտուելով զաս , ինչպէս
կը վայլէ : Օ գոյշ ըլլան անոնք որ մաս-
նաւոր վերակեցութիւն մը կամ հոգ մը
ունին ազգերնուս վրայ , վասն զի անոնց
կարծիքը բազմութեան հարուած կու-
տան , պաշտօնին խլանութիւնը դիւ-
րաւ կրնայ զիրենք խաթել , և կամքեր-
նին ճշմարտութիւն կարծեցընել . “ Դըւ-
” խիդ թագը՝ խելք չէ , ձեռքիդ գա-
” ւազանը՝ միշտ շիտակ ճամբու առաջ-
” նորդ չէ , ” կ’ըսէ լիիկար : Օ գուշա-
նան և զաստիարակք աշակերտաց վրայ .
ջանան վարժեցընելու զանոնք հլութէ
և կամքուրացութեան . Ճկուն ընեն
կարծիքնին բայց ոչ դիւրաքեկ . սորվե-
ցընեն հանդարտութեամբ վիճիլ , բայց
ոչ տաքութեամբ հակառակիլ . Ճանչ-
ցընեն շիտակն ու ծուռը , և նային որ
հաւանեցընել տան շիտակին . մանա-
ւանդ հանճարաւոր տղոց երեւնն յաղ-
թուիլ , վար իյնալ տան , որ վարժին
ատենօք ուրիշի կարծեաց տեղիք տա-
լու , և հաւտալու թէ իրենցմէ խելացի
մտածողն ալ կ’ըլլայ , թէ երկու աշք
մէկին շատ կը տեսնայ , թէ երբեմն ի-
մաստնոյն չտեսածը՝ տգէտը կը ցուցը-
նէ , թէ անսխալ մարդ չկայ , թէ կար-
ծիքը ճանչնալով փոխելը՝ իմաստութիւ-
նէ , անպատճառ փոփոխեն է անիմաս-
տութիւն , իսկ իր խելքին վրայ հա-
մարմունք ունենալով՝ անփոփոխ մնան՝
հպարտութիւն և անմտութիւն :

Հ . Դ . Ա

Ի արեկարգ ընդանելու :

Ի ն տ ա ն ե ա բ ը ա ե լ ո վ կ ը հ ա ս կ ը ն ա մ ք չ է
թէ միայն առանձին տնուորներ , հապա
նաև աշխարհիս ընկերութիւն ամբողջ ,
որ ամէն տեղ եղեր է և կայ . ուրեմն
ընտանեաց պարտքերը մէկ յաւիտենա-
կան և ընդհանուր բարոյականի մը հի-
մունքն են . որով տան մը բարոյականը
շտկելով՝ ընկերութեան բարոյականը
շտկած կ’ըլլանք : Ի ն տ ա ն ի ք ը մ ա ր դ կ ու-
թեան բնական կապն է . մեր հայրե-
նեաց օգուտները՝ մեր ընտանեաց օ-
գուտներուն հետ կապուած են : Ի ն-
տանիք ըսածդ ընութեան դպրոցն է ,
ընկերութեան բարոյական որորանն է :

Հ ա յ ր մը պատասխանատու է հայ-
րենեացը՝ իր որդւոցը դաստիարակու-
թեան համար . անամսկ որ եթէ անհո-
գութեամբ պակսի աս պարտքէն՝ հայ-
րենեաց դէմ յանցաւոր է : Ի ս ընտա-
նեաց մէջ շահամարութիւնը ամօթալի
ախտ մըն է , անձնասիրութիւնը՝ արհա-
մարհանաց արժանի : Ո է կ ք ա զ ա ք ա ց ի ի
մը համար անվայել բան է , ինքզինքը
միայն և իրենները մոտածել . ան մար-
դը խոհեմութեամբ և իմաստութեամբ
կը շարժի՝ որ ինքզինքը և իրենները և
հայրենիքն ալ կը մոտածէ կը հոգայ :
Ո ք ա զ ա ք ութիւն է որ մարդ նուիրէ ինք-
զինքը իր որդւոցը և տանը օգտին հա-
մար , բայց առաջին պարտքն է որ իր
կեանքն ալ և իր ընտանեաց կեանքն ալ
հայրենեացը համար նուիրէ :

Ո վ որ լաւ հայր է՝ անիկայ լաւ քա-
զաքացի ալ է . լաւ քազաքացի ըլլալու
համար պէտք է որ իր պատիւը ճանչ-
նայ , իր հայրենեացը օգուտը միշտ մոտա-
ծէ , իր քազաքակիցները իբրև իր եղ-
բարբը սիրէ և օգնէ անոնց , վրէ ժիմնդիր
ըլլայ անոնց իրաւանցը , և լաւ կատա-
րէ իր հայրենեացը և տանը ունեցած
պարտքերը :

Ի ն տ ա ն ե ա ց պարտք մըն է որ հայրը
ամենայն ջանքով աշխատի իր որդւոցը
աղէկութեանը համար , վասն զի հայր
մը զաւկի տէր ըլլալուն պէս՝ իբրև մոտա-

որ դաշինք մը ըրած կ'ըլլայ Իստուծոյ և մարդկան առջեւ միշտ ջանալու իր որդւոցը բնական և մտաւորական կատարելագործութեանցը . ուստի հայր մը պարտըկան է բոլոր հոգւովը աշխատելու անոնց կրթութեանը ու վիճակին վրայ . և թէ որ իր անհոգութեամբ անոնց բարոյականը աւրուի յանցաւոր է Իստուծոյ և մարդկանց դատաստանին առջեւ :

Ինտանեաց պարտք է՝ լաւ և կրթուած որդի ըլլալ . ապերախտութիւնը քան զամէն մոլութիւն չար է . յափտենական նախատինք է որդւոց թէ, որ չզոհեն իրենք զիրենք՝ իրենց ծնողացը բարւոյն համար, ուսկից որ իրենց կեանքը ընդուներ են :

Ինտանեաց պարտք է լաւ եղբայր ըլլալ . ընկերութեան մը մէջ ով արդեօք աւելի սիրելի է մեզի՝ եթէ ոչ նոյն մեր հօրը և մեր մօրը զաւկըները, անոնք՝ որոնք որ մեզի ընկեր եղեր են պատիկուց՝ ի վեր խաղերու, զուարձութեանց, ակնկալութեանց և ուսմանց :

Աէրը զոհ մըն է . և աս զոհը մէկ հօր մը, մէկ զաւկի մը, և մէկ եղբօր մը պարտքերն են :

Ինտանեաց պարտք է լաւ ամուսին ըլլալ, մէկ սիրտ մէկ հոգի ըլլալ, մէկմէկու պակասութեանցը համբերել և ծածկել . ամուսնաց առաքինութիւնները մէկ սրբազնն ժառանգութիւն մըն են իրենց որդւոցը :

Իս նիւթիս և մարդուս պարտքերուն վրայօք Արանթու մատենագիրը այս խորհրդածութիւնները կ'ընէ . “ Իս կեանքս ով տուեր է ինծի, ով կը պահէ, ով զիս կը մխիթարէ . ես խեղձ ողորմելի ծնայ, և գտայ մէկ մայր մը՝ որ սիրով խնամեց զիս, կերակեց և մեծցուց, և այսօրուան օրս կը տեսնեմ զիս սիրելի եղբարց, ազնիւ ընկերաց, ազգականաց մէջ՝ որ ինծի կը սորվեցընեն թէ որչափ քաղցր բան է սիրել զուրիշները ու սիրուիլ անոնցմէ . երկինքն ու օղը կը պահպանեն զիս, ծաղիկները, պտուղներն ու կենդանիները կը կերակրեն զիս ու կը զուարձա-

ցընեն . աս ամէն բարիքը ուսկից են ինծի . — Իստուծմէ . ես ինծմէ ամենեին արժանաւորութիւն մը չունէի . թէ որ մէկը ինծի բարիք մը կ'ընէ, իմպարտքս է զինքը սիրել, հապա որչափ աւելի պարտական եմ սիրել զայն՝ ուսկից իմ ամէն բարիքս կուգայ, ամէն օր որչափ չնորհակալութիւն պէտք է ընեմանոր :

“ Իմէն նման իր նմանը կը սիրէ . և Իստուած որ կատարեալ է՝ ըուզեր որ ստութիւն ու մեղք ոտքի տակ առնեն բարութիւնը ու արդարութիւնը . իրեն համու ըլլալու համար պէտք է ծանամ իրեն նմանելու, իրեն պէս ըլլամբարի, ողորմած և բարերար : Իստուած ոչխարին բուրդ տուեր է ցրտէն պահելու համար . Ճնձուկին որ ստակ մըն աւ չարժեր, Իստուած տուեր է կերակուր և բոյն . ուրեմն կրնայ ըլլալ որ ինքը երեսէ ձգէ զմարդը իր գերագոյն արածը . այսու ամենայնիւ դժբաղդութիւն մը որ կը հանդրափի՝ կը տրտնջամ, աս ինչ անիրաւութիւն է իմ ըրածս :

“ Ողորմած մարդուն մէկը մոլորեալ կոյր մը տուն կը տանէր այնպիսի ձամբէ մը որուն երկու կողմը անդունդներ էին, և որպէս զի ըլլայ թէ վար իյնայ ձամբուն մէջտեղին կը տանէր, ուր որ կոճղներ և քարեր կային . կոյրը ասոնցմէ տանջուելով սկսաւ իր բարերարին դէմ տրտնջալ . ու չէր մտածեր թէ մարդը՝ զինքը վտանգներէն ազատելով ողջ առողջ իր տունը կը տանէր : — Իս գլմած մարդը՝ Իստուած է, կոյրերը մենք ենք, ան արգելքները՝ աշխարհիս չարիքներն են, և տունը՝ ան երջանկութիւն է՝ ուր որ Իստուած մեզի կ'առաջնորդէ : Դժբաղդութեանց մէջ զինքը պիտի օրհնեմ, և պիտի ապրիմ զիս բոլորովին յանձնելով իրեն կամացը և ապաւիննելով իրեն բարութեանն ու նախախնամութեանը : Դմ ամէն պիտոյիցս մէջ իրեն պիտի վաղեմ, ինքը ինծմէ առաջ իմ պիտոյքս կ'իմանայ, բայց կ'ուզէ որ իրեն յայտնեմ, որպէս զի ես ինծմէ սորվիմ զինքը Ճանճաւ, որպէս զի ցուցընեմ իրեն իմ հպատակութիւնս, որպէս զի իմ երախտագի-

տութիւնս աւելնայ և երախտագիտութեամբ սէրո : Իմ օրինակովս ուրիշներն ալ յորդորուին զինքը պաշտելու . | և ասանկով իրեն թագաւորութիւնը ընդարձակի , և անունը փառաւորուի , :

ԲԱՆԱՍՏՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ



Լուսաւորէին :

ԴԵՐԱԶԱՆՑ մոտաց տուրք է մարդկանց սորվեցրնելը իրենց մաքին գաղափարները դիւրին կերպով իրարու հաջողել , ուսկից որ կախուած է մարդկային ընկերութեան յառաջադիմութիւնը : Առարդուս խօսքը հազիւ թէ պղտի տեղւոյ մը մէջ և քիչ մը ատեն փայն կրնայ զօրել . և որպէս զի ամէն տեղ լսուի և յաւիտեան մնայ՝ պէտք է որ գիր անցուած ըլլայ . բայց դրուածքով ալ այնչափ տեւական և ընդարձակ ազգեցութիւն չէր կրնար ունենալ , թէ որ կարելի ըլլար ուզածներնուս չափ նոյն գրուածքին օրինակը չատցընել , որպէս զի քիչ ժամանակի մէջ և քիչ ստըկով նոյն մէկ զիբքը կարենան ամէնքը ձեռուընին ունենալ : Հին ատենները մարդիկ իրենց լեզուին բառերը կերպ կերպ ձեւերու վերածե-

լով՝ մետաղներու վրայ կը փորէին , և ինչպէս որ կիկերոն , կուինստիլիսմոս և սուրբն Հերոնիմոս կը վկայեն՝ ինչուան ան ատենները մտածել են եղեր իւրաքանչիւր զրերը զատ զատ ձեացուցած՝ ետքը իւրարու քովշարելով՝ տալագրել . բայց գեռ մէկն ալ ձեռք չէր զարկած աս զիւտին : Ծինացիք տամներորդ դարէն ետքը կամ աւելի առաջ՝ սկսան տեսակ մը փորազգրութիւն , զբքին ամէն մէկ երեսին համար զատ զատ միակտուք ու ամուր տախտակներ շինելով՝ անոնց վրայ ուզածնին կը փորէին , ասով զրերը առանց իրարմէ բաժնուելու հաստատուն կը մնային : Արեմուտք ալ ժարուն վերջերը և ժե դարուն սկիզբները՝ նոյն կերպով սկսան խաղա-